ՏՈՒ ՏԱՌՈՂ ԹԱՆԱՊԱՐՀԸ

Bookmark

Vartan Gregorian

THE ROAD TO HOME

My Life and Times

Bookmark

Վարդան Գրիգորեան

ՏՈՒՆ ՏԱՆՈՂ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Իմ կյանքի պատմությունը

Թարգմանությունն անգլերենից՝
Աստղիկ Սարգսյանի

Bookmark

new mag

ԵՐԵՎԱՆ
2021

ՀՏԴ 82-94 Գրիգորեան
ԳՄԴ 84-4
Գ 886

Գրիգորեան Վ.
Գ 886 Տուն տանող ճանապարհը: Իմ կյանքի պատմությունը/ Վ. Գրիգորեան;
Թարգմ.՝ Ա. Սարգսյան.- Եր.: Newmag, 2021.- 496 էջ:

Կոլորիտային, ուսանելի ու հուզիչ այս հուշագրության մեջ Վարդան Գրիգորեանը նկարագրում է իր անցած ճանապարհը՝ Թավրիզում մանկությունից մինչև աշխարհի կրթված քաղաքացի դառնալը: Նրա ոդիսականը սկսվում է գավառական քաղաքի թաղամասում: Մանկությունն անցել է եկեղեցու, դպրոցի, ամերիկյան ֆիլմերի ու ավելի մեծ աշխարհի հանդեպ սիրով ու անհագ ընթերցանությամբ:

Գրիգորեանը հայտնվում է Բեյրութի Ճեմարանում, Սթենֆորդի համալսարանում, Նյու Յորքի հանրային գրադարանում, Բրաունի համալսարանում ու Քարնեգի հիմնադրամում: Սա իրանահայ երիտասարդի բացառիկ հաջողության պատմություն է, որն ամփոփում է Գրիգորեանի կյանքի բանաձևը՝ բաց լինել գիտելիքի առջև և անվերջ կրթվել:

ՀՏԴ 82-94 Գրիգորեան
ԳՄԴ 84-4

Գրքի հայերեն հրատարակությանն աջակցել է գործարար Ալբերտ Թառոյանը:

Գրքի գլխավոր գործընկեր
«ԷյԷմ-Փիջի Գրուպ» տպարան
www.ampg.am

AM-PG GROUP
COMMERCIAL & SECURITY PRINTING

ISBN 978-9939-884-07-3
Վարդան Գրիգորեան «Տուն տանող ճանապարհը. Իմ կյանքի պատմությունը»
© 2021, «Նյու Մեգ» ՍՊԸ
"The Road to Home: My Life and Times" Copyright © 2003 by Vartan Gregorian,
First Simon & Schuster trade paperback edition 2004

Այս գրքի հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները պատկանում են «Նյու Մեգ» ՍՊԸ-ին:
Թարգմանությունն իրականացվել է Simon & Schuster, Inc. ընկերության հետ կնքված պայմանագրով:
Հայերեն թարգմանության և հրատարակության իրավունքները ձեռք են բերվել
ԱՐԻ գրական գործակալության միջոցով:

Բովանդակություն

Ներածություն. Ծննդավայրս 9

Ընտանիքս 17

Մանկությունս 39

Թավրիզի հայ համայնքը 59

Փոքրիկ Փարիզը՝ Բեյրութը 93

Ամերիկան 139

Սթենֆորդի համալսարանը. նոր աշխարհ 157

Քաբուլ տանող երկար ճանապարհը 217

Սան Ֆրանցիսկոյի պետական համալսարանը 237

Դեպի Հայաստան՝ Արարատի երկիր 261

Դեպի Տեխաս 291

Եղբայրական սիրո քաղաքը 315

Նյու Յորքի հանրային գրադարանում 389

Բրաունի համալսարանը 443

Հետգրություն 475

Երախտագիտության խոսք 485

Bookmark

Նվիրում եմ սիրելի տատիկիս՝ Ոսկի Միրզայանին, որը սնել է իմ մարմինը, սիրտն ու հոգին:

Նվիրում եմ քրոջս՝ Օժիկին, որի ծնունդից ի վեր վայելել եմ իր բարությունն ու սերը, Սիմոն Վրացյանին և Վեյն Վուսընիչին, բոլոր ուսուցիչներիս, որոնք հնարավոր դարձրին այս ճանապարհն անցնելը, իմ աննման կնոջը՝ Քլերին, ու մեր երեք հրաշալի որդիներին՝ Վահեին, Ռաֆֆիին ու Դարեհ Արտաշեսին, որոնք իմ կյանքին իմաստ հաղորդեցին:

Bookmark

Ներածություն
Ծննդավայրս

Ես ծնվել եմ Իրանում՝ Թավրիզում՝ մի հինավուրց քաղաքում, որը փոթորկոտ ու փառահեղ անցյալ է ունեցել: Իր «Լեգենդ. քաղաքակրթության ծագումը» գրքում հնագետ Դեյվիդ Ռոլը* պնդում է, որ Եդեմի պարտեզն ամենայն հավանականությամբ տեղակայված է եղել Հյուսիսային Իրանում՝ Թավրիզում՝ իմ ծննդավայրում: Ծննդոց գրքում (2:10-14) ասվում է, որ Եդեմում էին գտնվում չորս գետերի՝ Եփրատի, Տիգրիսի, Գեհոնի և Փիսոնի ակունքները: Առաջին դարի հրեա պատմիչ Հովսեփոս Փլավիոսի ժամանակներից ի վեր գիտնականները վիճարկել են վերջին երկու գետերի իսկությունը: Ռոլը պնդում է, որ VII դարում, Իրանի իսլամացումից առաջ, Արազ (Արաքս) գետը հայտնի էր Գեյհոն անունով, որը Գեհոնի եբրայերեն համարժեքն է: Նա պնդում է, որ չորրորդ գետն Ուզունն է, իսկ Փիսոնն Ուզունի՝ եբրայերեն ձևափոխված տարբերակն է: Նա կարծում է, որ հայտնաբերել է Նաքդի անունով գյուղի տեղը, որը գուցե Նայիդ երկրում է եղել, այսինքն՝ այն վայրում, ուր արտաքսվեց Կայենն իր եղբորը՝ Աբելին սպանելուց հետո: Ծննդոց գրքում միայն նշվում է, որ այն «...Եդեմից արևելք էր»:

Թող պատմաբաններն ու աստվածաբանները շարունակեն բանավիճել, թե որտեղ է եղել Եդեմը: Ես միայն կարող եմ վստահեցնել, որ քսաներորդ դարի 30-ականների Թավրիզն ամենևին դրախտավայր չէր հիշեցնում, չնայած գարուններն այնտեղ գեղեցիկ էին, ամառները՝ հաճելի, ծաղիկները՝ հոյակապ: Թավրիզում պարտեզները գեղատեսիլ էին, միրգն ու բանջարեղենը՝ համեղ, պարսկական գորգերը՝ նրբարվեստ, խմելու ջուրը մաքուր էր ու անուշահամ, լուսաբացը տոգորում էր ներշնչանքով,

---

* David Rohl (ծնվ. 1950 թ.) – բրիտանացի պատմաբան, եգիպտագետ: Հայտնի է հակասական գիտական տեսություններով, որոնցում վերաշարադրել է եգիպտոսի և Պաղեստինի հնագույն պատմությունը: (Ծանոթագրությունները՝ **new**mag-ի):

մայրամուտը տպավորիչ էր: Ամռան գիշերներին մեղմ զեփյուռ էր փչում: Բայց քաղաքը նաև փոշոտ էր, ցեխոտ, խորը փոսերով լի: Թավրիզյան աշունը խոնավ էր, ձմեռը՝ խստաշունչ, կայծակը՝ ահազդու, անձրևը՝ հեղեղի պես վարար, կարկուտը քարի մեծության էր, ձյունը՝ ծանրառատ: Փոքր ու մեծ երկրաշարժեր էլ էին լինում, մահաբեր հիվանդություններ՝ տիֆ, խոլերա, չհաշված ծաղիկ ախտը:

Ամենից առաջ, սակայն, Թավրիզը երկար, հարուստ, դժվարին ու երբեմն էլ փառապանծ պատմություն է ունեցել: Քաղաքի հիշողության մեջ պահպանված են դարեր շարունակ տևած պայքարի, փորձությունների, հաղթանակների, պարտությունների, ողբերգությունների, ավերածությունների ու տեղափոխությունների պատմությունը, ճգնաժամի ու վերածնման շրջանները: Սահանդ սիրուն սարի հյուսիսում տեղակայված քաղաքը եղել է իրենց տարածքն ավելացնող կամ ավելացնել ձգտող մըրցակից կայսրությունների ու ախոյան թագավորությունների խաչմերուկ ու հաճախ է վերածվել ռազմի դաշտի ու ռազմական սահմանի, երբեմն եղել է քաղաքական ու տնտեսական ազդեցության կենտրոն, երբեմն հայտնվել ծայրամասում: Այս ընթացքում Թավրիզում ապրել են արհեստավորներ, առևտրականներ, գիտնականներ, բանաստեղծներ, քաղաքական առաջնորդներ, մանր կառավարիչներ, թագավորներ ու անգամ կայսրեր:

Թավրիզն առաջին անգամ հիշատակվում է Ասորեստանի թագավոր Սարգոն II-ի արձանագրության մեջ (Ք. ա. 714 թվական): Բազմաթիվ կառավարիչների օրոք՝ Ատրոպատեսից ու նրա դինաստիայից սկսած (Ք. ա. IV դար), և հատկապես Ղազան խանի ժամանակ, որը Ք. հ. 1295 թվականին Մոնղոլական կայսրության իշխանն էր, Թավրիզը մայրաքաղաք է եղել: Ղազան խանի կայսրությունը ձգվում էր Օքսուսից մինչև Եգիպտոսի սահմաններն ու Կովկասից մինչև Հնդկական օվկիանոս: Երբ Ղազան խանն իսլամ ընդունեց, Միջին Արևելքի ու Կենտրոնական Ասիայի պատմության մեջ նոր էջ բացվեց: Ազդեցության միջազգային ու տարածաշրջանային հավասարակշռությունը փոխվեց: Նրա կառավարման ժամանակ էր, որ Թավրիզն իր ազդեցության գագաթնակետին հասավ: Կայսրը մեծացրեց քաղաքն ու խոշոր քարվանսարաներ կառուցեց, շուկաներ ու հանրային բաղնիքներ, բազմաթիվ հայտնի մզկիթներ ու նշանակալի հանրային կառույցներ՝ աստղադիտարան, համալսարաններ ու գրադարաններ, որոնք թե՛ կայսրության տարածքում, թե՛ դրանից դուրս գիտ-

նականների գրավեցին դեպի Թավրիզ՝ այն վերածելով կրթական մեծ կենտրոնի: Խանի դամբարանի կառուցման վրա 14,000 մարդ է աշխատել: 1392 թվականին, մոնղոլների կառավարման ավարտից հետո, քաղաքը հիմնովին թալանվեց Լենկթեմուրի կողմից:

Արաբների, սելջուկ-թուրքերի, մոնղոլների, թաթարների, թուրքմեն-ների, ուզբեկների, օսմանյան թուրքերի ու ռուսների նվաճած քաղաքում բնական աղետներ էլ էին լինում: Ք. հ. 634–1936-ն ընկած ժամանակա-հատվածում այն ավերվել է 15 ուժգին երկրաշարժից, 1737-ին ժանտախ-տի համաճարակն է ամայացրել քաղաքը: Այնուամենայնիվ, Թավրիզի ավերակներում մնացած բնակիչները միշտ հաստատակամություն են ցուցաբերել՝ կառուցելով ու վերակառուցելով իրենց քաղաքը, ու շարու-նակել են պահպանել նրա առևտրային ու ռազմավարական դերը տարա-ծաշրջանում, առանցքային տեղը Մետաքսի ճանապարհին: Թավրիզի զարմանահրաշ շուկային, որը նրա տնտեսական ազդեցության առանցքն է, հիացմունքով են անդրադարձել տարբեր ժամանակների պատմիչներ Իբն Բատուտան (1327), Ռույ Գոնսալես դե Կլավիխոն, Ջազուֆո Բարբա-րոն (1474), Ջ. Բ. Տավերնիերը (1632), Օլեարիուսը (1637) և Ժան Շարդենը (1641), որը գրել է, որ Թավրիզում 250 մզկիթ ու 300 քարվանսարա է եղել:

Թավրիզը մայրաքաղաք դարձավ 1501 թվականին, Սեֆյան կայսրության հիմնադիր Շահ Իսմայիլի գահակալության շրջանում: Կայսրությունը գոյա-տևեց մինչև 1736 թվականը: Շահ Իսմայիլն իսլամի շիա ուղղության ամենա-խիստ դրույթների ջատագովն էր: Նա այս կրոնական ուղղությունը դարձրեց Պարսկաստանի պետական կրոնը՝ պաշտոնականացնելով իսլամի շիա և սունի ուղղությունների բաժանումը: Այսպիսով, սկսվեցին Օսմանյան և Պարս-կական կայսրությունների պարբերական բախումները, որոնք տևեցին ավելի քան երկու դար: Քաջարների դինաստիայի օրոք (1784–1925) Թավրիզը նըս-տավայրն էր Պարսկաստանի արքայազունների, որոնք հաճախ հանդիսա-նում էին նաև Ատրպատական գավառի տիտղոսակիր կառավարիչները:

18-րդ դարից մինչև 20-րդ դարի առաջին կեսը Պարսկաստանը բախ-վեց եվրոպական իմպերիալիզմին և շախմատային զինվորի կարգավի-ճակ ստացավ Մեծ Բրիտանիայի ու Ռուսաստանի միջև ծավալվող «Մեծ խաղի» մեջ: Պետրոս Մեծի ու Եկատերինա Մեծի օրոք և նրանցից հետո Ռուսաստանը Պարսկաստանի դեմ ագրեսիվ պատերազմներ էր մղում: Ռուսական ուժերը գրավեցին Թավրիզը, բայց 1828 թվականին կնքված

Թուրքմենչայի պայմանագրով այն վերադարձրին Պարսկաստանին: Այս պայմանագիրն ի մի բերեց երկու տասնամյակ շարունակ ռուսների տարած հաղթանակները: Պարսկաստանը կորցրեց կովկասյան երկու հարուստ գավառները, և այսօրվա Վրաստանը, Ադրբեջանն ու Հայաստանը կցվեցին Ռուսաստանին: Արազ (Արաքս) գետը դարձավ Ռուսական կայսրության և Պարսկաստանի թագավորության սահմանը:

19-րդ դարի սկզբին Աբբաս Միրզան՝ Քաջարների տոհմից սերող արքայազնը, որն Ատրպատականի կառավարիչն էր, Թավրիզը մոդեռնացնելու ծրագիր սկսեց: Նա արևմտյան ոճով հաստատություններ հիմնեց, արդյունաբերական հաստոցներ ներմուծեց, գործարկեց առաջին փոստային ծառայությունը, ռազմական բարեփոխումներ արեց: Աբբաս Միրզան վերակառուցեց քաղաքն ու Արևմուտքի հետ դիվանագիտական հարաբերություններ հաստատեց՝ դաշնակցելով սկզբում Նապոլեոնի, հետո Անգլիայի հետ, որպեսզի ռուսական սպառնալիքի դեմն առնի: Նա փորձեց հարկման խելամիտ համակարգ ներդնել ու պայքարել կոռուպցիայի դեմ: Աբբաս Միրզան հեռուն գնացող ծրագրեր ուներ, բայց նրա ֆինանսական միջոցները սահմանափակ էին: Նա մահացավ 1833 թվականին՝ Հերաթ քաղաքում Պարսկաստանի իշխանությունը վերահաստատելու արշավանքի ժամանակ: 1841 թվականից ի վեր Մեծ Բրիտանիան ու Ռուսաստանը Պարսկաստանում քաղաքական ու առևտրային գերակայություն հաստատեցին: Անգլո-ռուսական կոնվենցիան 1907 թվականին երկիրը բաժանեց բրիտանական ու ռուսական ազդեցության գոտիների:

20-րդ դարի առաջին տասնամյակում Թավրիզն ու Ատրպատական գավառը պարսկական ազգայնական շարժման կենտրոններ դարձան: Թավրիզի քաղաքացիները պայքարեցին ու հաջողության հասան՝ 1908 թվականին հաստատելով սահմանադրական միապետություն: 1915 թվականին, Առաջին աշխարհամարտի ժամանակ, չնայած Պարսկաստանի պաշտոնական չեզոքությանը, Օսմանյան ուժերը գրավեցին Թավրիզը: Հետո ռուսները պարտության մատնեցին նրանց ու դուրս մղեցին թուրք-քրդական ուժերին: 1917 թվականի Ռուսական հեղափոխությունից հետո ռուսական զորքը հետ քաշվեց, օսմանյան զորքը վերադարձավ: Նրանք ստիպված եղան Թավրիզից հեռանալ միայն Դաշնակիցների հաղթանակից հետո: Պարսկաստանի կառավարության իշխանության տակ գտնվում էր միայն Թեհրանը: Երկիրը սնանկացած էր: 1919 թվականին կնքված անգլո-իրա-

նական պայմանագիրը Պարսկաստանը վերածեց դե ֆակտո բրիտանական պրոտեկտորատի: 1925 թվականին Ռեզա խանը գահընկեց արեց Քաջարների դինաստիայի վերջին ներկայացուցչին ու ինքն իրեն հռչակեց Ռեզա Շահ Փահլավի: Նա սկսեց վարել մոդեռնացման ու արևմտականացման լայնածավալ քաղաքականություն՝ կենտրոնացնելով բյուրոկրատիան, ստեղծելով ժամանակակից բանակ, կրթական ու հասարակական բարեփոխումներ սկսեց, չեզոքացրեց կրոնական ու ցեղային առաջնորդների իշխանությունը, պետականացրեց մասնավոր դպրոցները: Երբ ես ծնվեցի, Իրանը տոնում էր Փահլավիների դինաստիայի 10-րդ տարեդարձը:

Իմ մանկության Թավրիզն իր փառապանծ անցյալի ընդամենը երկու մեծ պատմական հուշարձանների ավերակներ էր պահպանել՝ Ալի Շահի մզկիթը, որը կառուցվել էր 1312-1322 թթ. ու Քաջարների օրոք վերածվել ամրոցի, և Կապույտ մզկիթը (Ք. հ. 1456 թ.), որը ճարտարապետական գլուխգործոց է:

Իրանում հասարակությունը բազմալեզու էր՝ պարսիկները, թուրքերը, քրդերը, բելուջները, թուրքմեններն ու արաբներն էթնիկ մեծամասնություններ էին: Իրանցիների մեծ մասը շիա մուսուլման էր, քրդերն ու թուրքմենները՝ սունի: Հիմնական կրոնական փոքրամասնություններն էին հայկական ու ասորի քրիստոնյա համայնքները և ավելի փոքրաթիվները՝ հրեաները, զրադաշտականները, Բահայի հետևորդները, ինչպես նաև վրացի քրիստոնյաները: Թավրիզը կարծես Իրանի մանրակերտը լիներ: Բնակչության մեծ մասը թուրքերեն էր խոսում: Բացի ավելի մեծ համայնքներից՝ կային նաև ռուսներ, ամերիկացի միսիոներներ, սակավաթիվ ֆրանսիացիներ և այլ արտասահմանցիներ: Ամենամեծ կրոնական փոքրամասնությունն ու ամենահներից մեկն իմ հայ համայնքն էր:

Ք. ա. 6-7 դարերում հայերն ու Հայաստանը ժամանակ առ ժամանակ կա՛մ լիովին հայտնվում էին Իրանի տիրապետության տակ, կա՛մ գտնվում էին Իրանի քաղաքական, ռազմական ու տնտեսական ազդեցության տակ: Հայոց թագավորները, իշխաններն ու նրանց զինվորները հաճախ ծառայում էին պարսկական զորքերի շարքերում: Ախոյան կայսրությունների միջև Հայաստանը ռազմի դաշտի էր վերածվում ու անթիվ ասպատակությունների խաչմերուկ դառնում: Երկիրը հաճախ էր ավերվում, ու հայերը տարհանվում էին, քանի որ նվաճողները հողին էին հավասարեցնում գրված տարածքները: Սելջուկները 1048-1071 թթ. մեծ թվով հայ

գերիների տարան Իրան: 14-15-րդ դարերում մոնղոլ ու թուրքմեն նվաճող-ները շարունակեցին նրանց քաղաքականությունը: 16-րդ դարասկզբից Իրանի գրեթե բոլոր մեծ քաղաքներում հայ համայնքներ կային:

16-17-րդ դարերում Օսմանյան և Սեֆյան կայսրությունների բախմամբ ավերածությունների նոր փուլ սկսվեց: Երկու կայսրությունները 1514-1639 թթ. ընթացքում 11 խոշոր պատերազմներ մղեցին, որոնք սկսվեցին Չալ-դիրանի ճակատամարտով և ավարտվեցին Զուհաբի պայմանագրով: Օսմանյան և Սեֆյան կայսրությունների միջև բաժանված Հայաստանը հաճախ հիմնական մարտի դաշտն էր: Քաղաքներն ու գյուղերն ավերվում էին ու թալանվում, բնակչությունը սրի էր քաշվում, տեղահանվում կամ տարվում ստրկության: Որոշ հայեր բնակություն հաստատեցին Ստամ-բուլում կամ Իրանի կենտրոնական քաղաքներում: Սեֆյան կայսրության տիրակալ Շահ Աբաս I-ը 1603 թվականին գրավեց Թավրիզը և տաս-նյակ հազարավոր մարդկանց, հիմնականում հայերի, տեղահանեց դեպի Իրան: 1604 թվականի աշնանն Օսմանյան ուժերի առաջխաղացմանը զու-գահեռ պարսիկները տարածաշրջանային խոշոր առևտրային կենտրոն Զուլֆա հայկական քաղաքի բնակիչներին հարկադրաբար տարհանեցին ու բնակեցրին Սպահանում: Պարսիկներն ավերեցին Զուլֆան, որպեսզի հայերը վերադարձի որևէ հույս չփայփայեն:

19-րդ դարի վերջին Թավրիզը հայ մշակույթի խոշոր կենտրոն էր և Հայ եկեղեցու նստավայրն Ատրպատականում: Գավառի հոգևոր առաջնորդ-ները ողջունում էին աշխարհիկ ուսուցիչներին ու աշխարհիկ մշակույթը: Հայ ուսուցիչները, գիտնականներն ու մտավորականները, որոնք կրթու-թյուն էին ստացել ռուսական, եվրոպական քոլեջներում ու համալսարան-ներում, հազարավոր ուսանողների կրթեցին հայկական տարրական և միջնակարգ ծխական դպրոցներում: Նրանց մեջ էին 1880-1890 թթ. հայ ազգայնական և հեղափոխական շարժումների առաջնորդները: Գոր-ծում էր հայկական հրատարակչություն, որը հայերեն գրքեր, պարբերա-կաններ և դասագրքեր էր հրատարակում: Քաղաքը նաև պարծենում էր հայկական Արամյան թատրոնով*, որտեղ պիեսներ էին բեմադրվում,

* Արամյան թատրոնը ստեղծվել է Կոստանդնուպոլսում 1846 թ.: Թատրոնի ստեղծման առաջին տարում այն անվանվել է թատրոնի հիմնադիր և առաջին դերասան Հովհաննես Գասպարյա-նի անունով: 1847 թ. թատրոնը վերանվանվել է «Արամյան», գործել մինչև 1866 թվականը՝ 20 տարի: Մինչև 1850-ականների վերջը սա միակ թատրոնն էր Մերձավոր Արևելքում:

հրավիրվում էին արտասահմանյան դերասաններ ու դերասանուհիներ: Խաղացանկում հայ հեղինակների և Շեքսպիրի պիեսներն էին: Արամյան թատրոնը երբեմն նաև օպերա էր բեմադրում:

1906 թվականին արդեն հայկական լարային նվագախումբ էր գործում: Ջութակի ու դաշնամուրի ուսուցիչները, որոնք կրթություն էին ստացել Անգլիայում, Ռուսաստանում, Բելգիայում ու Գերմանիայում, մասնավոր դասեր էին տալիս ու երաժշտություն դասավանդում տարրական և միջնակարգ դպրոցներում: Ամերիկացի միսիոներների հիմնած Ամերիկյան Մեմորիալ ավագ դպրոցը Թավրիզի հպարտությունն էր: Հարյուրավոր հայեր, ասորիներ, հրեաներ, թուրքեր ու պարսիկներ միջնակարգ կրթությունն անգլերեն էին ստանում: Ֆրանսիացիները վարում էին Ժաննա դ'Արկի անվան դպրոցը, որտեղ միանձնուհիները կրթում էին աղջիկներին: Բացի Մեմորիալ դպրոցից՝ ամերիկացի միսիոներները նաև Ամերիկյան հիվանդանոց էին հիմնել: Գործում էին նաև յոթերորդ օրվա ադվենտիստների*, մեթոդիստների** ու պրեսբիտերական եկեղեցիներ***:

1935–1936 թթ. պարսկական կառավարությունը Ռեզա Շահ Փահլավիի հրամանով պետականացրեց բոլոր մասնավոր և ծխական դպրոցներն ու 1939-ին փակեց ամերիկյան և այլ օտարալեզու դպրոցները: Հայերենն արդեն հնարավոր էր դասավանդել միայն իբրև կրոնի լեզու: Կառավարությունը երկրի անունը՝ Պարսկաստան, փոխարինեց Իրանով, որը երկրի պարսկերեն անվանումն է: Ենթադրվում էր, որ այդ փոփոխությունը նախաձեռնել էր Նացիստական Գերմանիայում Պարսկաստանի դեսպանը, քանի որ Գերմանիան բարելավում էր իր հարաբերություններն արիական ծագում ունեցող ազգերի հետ. «Իրան» և «արի» բառերը միևնույն ար-

---

* Ադվենտիստ (լատիներեն՝ adventus–գալուստ) – 1830-ական թթ. ԱՄՆ-ում բողոքականության ընդերքում առաջացած քրիստոնեական հոսանքի հետևորդներ: Զարգացման ընթացքում ադվենտիզմը տրոհվել է ճյուղերի, որոնք կազմել են ինքնուրույն եկեղեցիներ: Դավանության գլխավոր կետերն են Հիսուս Քրիստոսի մոտալուտ «երկրորդ գալստյան», ահեղ դատաստանի, երկնքում հազարամյա արքայության հավատը:

** Մեթոդիստական եկեղեցին բողոքական ուղղություն է, որն անջատվել է Անգլիկան եկեղեցուց: Այս ուղղության առաջացումը կապում են Աստվածաշնչի մեթոդիկ կամ համակարգված ուսումնասիրման, ծեսերի և եկեղեցական այլ կարգերի կատարման համար Օքսֆորդի համալսարանում 1729 թ. Ուեսլի եղբայրների հիմնած «սուրբ ակումբի» հետ, որի հեգնական անվանումը նրանք ստացել են այլ ուսանողների կողմից:

*** Պրեսբիտերականներ (երիցականներ), կալվինականության հետևորդներ – սկիզբ են առել Շոտլանդիայում 16-րդ դարում: Պրեսբիտերական եկեղեցին պետական եկեղեցի է դարձել Շոտլանդիայում (1592) և Անգլիայում (1644):